# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***ք. Երևան, Արշակունյաց պողոտա հ. 28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. հուլիսի 15-ին ժամը 10:00-ին՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել «ՅԱՌԴ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված րշակունյաց պողոտա հ. 28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, Շենգավիթ վարչական շրջանի աշխատակիցները, Երևան քաղաքի ավագանու անդամները, քաղաքապետարանի ներկայացուցիչը և բնակիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց ներկաներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի և թրթռման հետ և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը: **Ներկայացուցիչը** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, ինչպես նաև համայնքում սոցիալական ազդեցությունը և ստեղծվող աշխատատեղերը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց կանաչապատման նախահգծի, տնկվող ծառատեսակների, կոյուղու համակարգի վերաբերյալ և խնդրեց մանրամասն ներկայացնել:

**Նախաձեռնող կողմը** ներկայացրեց կանաչապատման նախագիծը, ծառատեսակները տվյալ տարածքին համապատասխան, և հավելեց որ, նախատեսվող գործունեության տարածքը հանդիսացել է տվյալ տարածքի բնակիչների երեխաների համար խաղահրապարակ, ինչի հիման վրա էլ սկզբնական փուլերում եղել են դժգոհություններ բնակիչների կողմից, սակայն նախաձեռնողի կողմից առաջարկ է եղել այլ տարածքում խաղահրապարակ, կանաչապատ տարածքներ և ժամանցի վայր ստեղծել, ինչի համար էլ դիմել է քաղաքապետարան հարակից տարածքում իրականացնի վերը նշվածը և ստացել է համաձայնությունը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարցրեց արդյոք կատարվող աշխատանքները ազդեցություն չեն ունենա հարակից շենքերի, բնակարանների և այլնի վրա, և արդյոք բնակիչների բողոքը կապված բնակարանների լուսավորության հետ վտանգված չէ:

**Նախաձեռնողը** պատասխանեց որ իրականացվել են հետազոտություններ կապված ինսոլացիոն ազդեցության և երկրաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ և առկա են այդ մասնագիտական եզրակացությունները, որոնք փաստում են որ էական ազդեցություններ չի ունենալու նախատեսվող գործունեությունը:

**Ավագանու անդամը** հարց բարձրացրեց կոյուղու համակարգի հետ և ասաց որ կանաչապատում իրականացնել քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

**Քաղաքապետարանի ներկայացուցիչը** պատասխանեց որ կանաչապատման նախագիծը վերջնական փուլում պետք է ներկայացվի հաստատման, որտեղ էլ հստակ կհաստատվի ծառաթփային կազմն ու քանակները:

**Նախաձեռնող կողմը** պատասխանեց որ կոյուղու համակարգը միացվելու է տարածքով անցնող կայուղագծին, ինչը բավարարում է:

Մասնակիցները ծանոթացան նախագծով ներկայացված գծագրերին:

**Հ. Ֆրունզիկյանը** հավելեց և ասաց գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում իրականացնել փոփոխությունները և բոլոր մասնագիտական եզրակացությունները ներկայացնել ՇՄԱՓԿ ՊՈԱԿ:

Այլ հարցեր չինչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«ՅԱՌԴ» ՍՊԸ-ի տնօրեն/ներկայացուցիչ՝

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը: